

մոտ՝ քրդեր և ղարաշիներ, Արաքսպար հովտից բարձր՝ շամլուներ<sup>36</sup>: Ըստ Վիճակագրական տվյալների՝ XX դ. սկզբին Ղարադաղում մնացել էր ընդամենը 29 հայաբնակ գյուղ<sup>37</sup>:

1946թ. Ղարադաղի հայերի՝ դեպի Խորհրդային Հայաստան կատարած ներգաղթի հետևանքով Երկրամասն ամբողջությամբ հայաթափվել է<sup>38</sup>:

## КАРАДАГ

**А. Г. КАРАГЕЗЯН**

Карадаг был одним из областей исторической Армении. Греческий географ Страбон упоминает его под названием Фавнитида. Исследования показывают, что Фавнитида-Карадаг территориально соответствует западной части провинции Пайтакаран Великой Армении, а его восточная часть занимала страна Баласакан(Каспиане-Каспк).

## GHARADAGH

**A. H. GHARAGYOZYAN**

Gharadagh was one of the historical Armenian regions. Greek geographer Strabon mentioned it by the name Phavnitis. Investigations show that Phavnitis-Gharadagh corresponds to the Western sector of Phaytakaran region in Great Armenia, and the Eastern part was Baghasakan world (Caspiane-Caspq).

## ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՇՈՒՅՆԵՐԻ ԶԱՐԴԱՐՎԵՍԸԸ

**Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ**

Բրոնզի դարաշրջանի մետաղագործության յուրաքանչյուր փուլ ինքնատիպ և յուրօրինակ է արվեստի որոշակի արտահայտչամիջոցներով, հատկապես դրանց զարդարման արվեստով։ Ուշագրավ են վաղ բրոնզից մինչև ուշ բրոնզ ընկած դարաշրջաններին (մ.թ.ա. IV հազ. վերջ - XI դ.) վերաբերվող՝ Սևանի ավազանից հայտնաբերված մետաղագործական արտադրանքի նմուշները, որոնք, կիրառական նշանակությունից զատ, ունեցել են նաև պաշտամունքային բնույթ։

Բազմաթիվ գտածոներ վկայում են, որ Անդրկովկասյան տարածաշրջանը հնագույն և ինքնուրույն մետաղամշակման օջախներից է։ Քենց կովկասյան պղնձահանքերի հարստությունն էր այս հիմնական պատճառներից մեկը, որ այն

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 43-57:

<sup>37</sup> **Ե. Ֆրանգեան**, նշվ. աշխ., էջ 98; **Յ. Յովսեփյան**, նշվ. աշխ., էջ 145:

<sup>38</sup> **Յ. Յովսեփյան**, նշվ. աշխ., էջ 145, 156-157:

դարձավ ամենահզոր մշակութային կենտրոններից<sup>1</sup>:

Սևանի ավազանի և Հայկական լեռնաշխարհի մշակույթի կարևոր բաղադրամաս է կազմում մետաղագործությունը: Հայաստանի տարածքում բրոնզեդարյան մետաղյա իրերի, այդ թվում և Սևանի ավազանից հայնաքերվածների ուսումնասիրության հիման վրա պատկերացում ենք կազմում պատրաստող վարպետների և ընդհանրապես այդ դարաշրջանի տեղաբնակների ճաշակի, մտածողության, պաշտամունքի և հոգևոր ընկալումների մասին: Յարկ է նշել, որ բրոնզի յուրաքանչյուր փուլի գարդանախչի վերապրուկները նկատելի են դրան հաջորդող փուլում, որոնք երբեմն կատարելագործվել և լայն տարածում են ստացել: Բնական է, որ դրանց առանձին դրսնորումներ ժամանակի ընթացքում մոռացության են մատնվել:

Մետաղագործական իրերի գարդանախչումը իր ձևով ու տեսակներով այնքան էլ չի տարբերվում խեցեգործական նմուշների նախշերից, տարբերությունը նյութի և պատրաստման տեխնիկայի մեջ է, և այն, որ մետաղե իրերը պահանջում են այլ մոտեցումներ, երբեմն էլ սրանցում հանդես են գալիս գարդարման նոր եղանակներ:

Բրոնզի դարաշրջանի մետաղագործական իրերի գարդանախչումը որոշ ինաստով ինքնատիպ է, և երեք փուլերի անցումային ընթացքում նարդը փնտրել է նոր գարդարման ձև, ոճ, հորինվածք, ստեղծել նոր տեսակներ: Ի տարբերություն խեցելենի, մետաղագործությունում փորագրման, ընդելուզման (քարերով, ոսկով, արծաթով, փայտով) շնորհիվ ստեղծվել են արվեստի յուրօրինակ աշխատանքներ, ինչը ավելի ակնհայտ է միջին և ուշ բրոնզի դարաշրջաններում:

Ոեւևս վաղ բրոնզի դարաշրջանում Սևանի ավազանը մետաղագործության հնագույն օջախներից էր: Դարաշրջանի առաջին փուլում (մ.թ.ա. XXXV-XXIVդդ.) բրոնզը կիրառվել է հիմնականում տնտեսական գործիքներ, գենքեր պատրաստելու համար: Ուշադրություն չի դարձվել գարդարման, քանդակման, հորինվածքի և ստեղծագործական նտքի վրա: Նկատենք մի հանգամանք. եթե Սևանի ավազանի վաղ բրոնզի դարաշրջանի մետաղե շատ իրեր հիմնականում անգարդ են կամ պարզունակ՝ հասարակ գարդանախշերով, ապա դա չի նշանակում, որ գարդանախշը ընդհանրապես բացակայել է, ուղղակիորեն այն լայն տարածվածություն և կիրառություն չի ունեցել: Ենթադրաբար, դրա գոյությունը եղել է, ինչը կարող ենք փաստել գարդանախշման միջին և ուշ բրոնզի դարաշրջանների մետաղագործական իրերի կատարելությամբ և վարպետությամբ, հետևաբար չեր կարող այդ արվեստը անմիջապես միջին բրոնզից սկսել, դրա արմատները գալիս են վաղ բրոնզի փուլից, և միայն հաջորդներում են կատարելագործվել: Սկզբում դրանք չունեին կոնկրետ նախշեր, սակայն ունեին գարդանախշման ձև և կառուցվածք<sup>2</sup>:

<sup>1</sup> **Монгайт А. А.** Археология СССР, Москва, 1955, с. 116; **Бабаян Г. В.** Основы археологии (Бронзовый век. Кавказский центр металлургии), Ростов-на-Дону, 2004, с. 93-94.

<sup>2</sup> **Тараян З. Р.** Символы симметрии орнамента в Армянском прикладном искусстве, Ереван, 1989, с. 64.

Սևանի ավագանի միջին բրոնզեդարյան հուշարձաններից (մ.թ.ա. XXIV-XVI դդ.) հայտնաբերվել են մետաղից պատրաստված տարաբնույթ առարկաներ (զենքեր, զարդեր, աշխատանքային գործիքներ, պաշտամունքային նշանակության իրեր)՝ չնայած դրանք քանակապես սակավաթիվ են, ավելի պարզունակ: Դրանցում հատկապես գերակշռություն են զենքերը, մանավանդ՝ լայնակոս զարդերով դաշույնները:

Դամեմատելով և զուգահեռներ անցկացնելով վաղ և միջին բրոնզի դարաշրջանների մետաղագործական արվեստի և զարդանախշման հետ, տեսնում ենք, որ ուշ բրոնզի դարաշրջանի զարդանախշման արվեստը ավելի հարուստ և ճոխ է, ինչպես նաև՝ ավելի զարգացած պատրաստման հմտություններով: Իրավացի է Յ. Մարտիրոսյանը, նշելով, որ. «Դայ արվեստի հոգևոր և նյութական կյանքի ակունքները պետք է փնտրել ուրարտական և ուշ բրոնզեդարյան մշակույթի ընդերքում»<sup>3</sup>:

Սևանի ավագանի ուշ բրոնզեդարյան մշակույթի (մ.թ.ա. XV-XI դդ.) զարգացումը պայմանավորված է մետաղի օգտագործման և արտադրական ուժերի զարգացման նոր վերելքի հետ: Այդ ժամանակաշրջանում կիրառություն են գտել տարբեր մետաղներ՝ պղինձ, բրոնզ, արծաթ, ոսկի, մաքուր անագ, ծարիր: Առանձնահատուկ դեր է ունեցել ոսկին, որից պատրաստվել են արվեստի անկորկնելի նմուշներ ու պերճանքի առարկաներ, որոնք իրենց զարդանախերով տիպական են հայկական արվեստին, բնորոշելով ներկայիս հայ արվեստի ակունքները:

Մարդկային մտքի ծկունության շնորհիվ պատրաստվել են ոչ միայն աշխատանքային գործիքներ և զենքեր, այլև դրվագվել զարդեր, ձուլվել եղջերուների, ցուլերի, այծերի, այծյամների, առյուծների, թռչունների կատարյալ արվեստի հասնող արձանիկներ, ռազմակառքի բրոնզե մանրակերտեր, զանազան պաշտամունքային իրեր, որոնք, քանդակներ լինելուց զատ, նաև զարդարանքի առարկաներ են:

Տեղաբնակները մեծ հմտություն և գիտելիքներ են ունեցել մետաղագործության բնագավառում, ինչպես նաև դրանց զարդանախշման արվեստում, սերտուն կապված են եղել Դիլիջանի, Գուգարքի, Լոռի-քերոշի, Յանքավանի, Շամլուղի, Արցախի, Թռեղջի, Ուգերլիկ-քեփեի մշակույթների հետ<sup>4</sup>:

Ուշ բրոնզի դարաշրջանում ավելի շատ գերակայություն է տրվում առարկայի պատկերավորությանը, քան զարդանախշմանը<sup>5</sup>:

Բրոնզե, երեմն նաև ոսկե իրերը, որ ուղեկցող նյութ են հանդիսացել ննջեցյալի համար, դրանց պատրաստման ձևը, ճոխությունը, հստակորեն վկայում են հանգուցյալի դասային աստիճանի և հասարակության մեջ զբաղեցրած տեղի:

<sup>3</sup> Մարտիրոսյան Յ. Ա., Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր ու դամբարանադաշտեր, Յայստանի հնագիտական հուշարձանները, պրակ II, Երևան, 1969, էջ 42:

<sup>4</sup> Ավետյան Վ. Վ., Սևանի ավագանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Երևան, 2003, էջ 126:

<sup>5</sup> Տարայն Յ. Պ., տառ յե, ս. 83.

մասին: Մրա մասին առանձնակիորեն փաստում են ավագանից գտնված տարատեսակ դաշույնները:

Մեր կողմից բրոնզե դաշույն է գտնվել Գեղարքունիքի մարզի Այրիվան գյուղում բացված Ա-1 կուրգանային դամբարանից<sup>6</sup>:

Դաշույնի շեղբը միաձույլ է խաչարդի հետ: Խաչարդի վերին հիմքից շեղբի եզրերը սահուն նեղանալով՝ ավարտվում են կիսաօվալաձև վերջավորությամբ: Շեղբի կենտրոնով վերից վար անցնում է 5 մմ լայնությամբ ջիղ: Խաչարդը սեղանաձև է, շեղբի հիմքից սահմանազատվում է աննշան հաստությամբ, որի վրա կամ հավասարաչափ հեռավորությամբ 7 միջանցիկ կլոր անցքեր: Խաչարդին կպած է 3,5 սմ երկարությամբ և 1,5 սմ լայնությամբ տափակ, ծայրը կլոր պոչուկելուստ՝ վերջավորությունում կլոր անցք՝ դաստակին ամրացնելու համար: Հավանաբար դաստակը եղել է փայտից կամ ոսկորից, որը մի ծայրով մտել և ամրացվել է գլխիկին: Դաստակի գլխիկը բրոնզից է, ունի հովհարաձև տեսք, սուրանյուն եռանկյունի կտրվածքներով, որոնք մեկը մերժանելով ընդելուզվել են գունավոր փայտերով (փայտի մնացորդները պահպանվել են)<sup>7</sup>: Այսինքն՝ փայտը ևս եղել է բրոնզե առարկայի զարդարման միջոց, և պատրաստող վարպետը մտածել է տարբեր հնարանքներ և տվել դրանց իր մտածած և պատկերացրած հորինվածքը: Մեզ հայտնի միջին բրոնզեդարյան դաշույնների շեղբերը հիմնականում նման են սույն դաշույնի շեղբին, սակայն գլխիկավոր դաստակներով դաշույններ միջին բրոնզի դարաշրջանում սակավ են պատահում, այդպիսիք ունենում են շրջանակավոր դաստակներով դաշույններն ու սրերը: Այս առումով Այրիվանից հայտնաբերվածը կարելի է դասել եզակիների շարքին կամ դիտել որպես նորություն՝ Սևանի ավագանի միջին բրոնզեդարյան գտածոնների մեջ:

Սևանի ավագանից հայտնաբերված ուշ բրոնզեդարյան դաշույնների մեջ կամ այնպիսիները, որոնք զարդարման արվեստով վկայում են տեղաբնակների մետաղագործության և դրան գորգահեռ՝ զարդանախշման արվեստի կատարելության մասին: Դրանք հավանաբար ծիսական նշանակության դաշույններ են, կամ պատկանել են բարձր դիրք զբաղեցնող մարդու, ենթադրաբար՝ քրմապետի կամ զորապետի: Դաշույնների վրա պատկերված կենդանական ռելիեֆ-վերադիր զարդաքանդակները խոսում են տոտեմապաշտական երևույթի մասին (**Ակ. 1:**)։ Դրանց պատյանները ծածկված են հիմնականում սեպաձև կտրվածքներով կամ սեպանախշերով, որի նախշային կիրառումը լայնորեն տարածված է այս մշակույթում: Ըստ Լճաշենի հնագույն մշակույթը հայտնաբերող և պեղող անվանի հնագետ Յարություն Մնացականյանի ուսումնասիրության, լճաշենյան դաշույնների «պատյաններից մեկի վրա այդպիսի ծակոտկենների թիվը հասնում է 1.500-ի»<sup>8</sup>:

<sup>6</sup> Ավետյան Վ. Վ., Թեղիշյան Մ. Ս., Միջին բրոնզեդարյան նյութեր Այրիվանից.- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, պրակ 1, Երևան, 2003, էջ 304-309:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 308, աղ. 1, Ակ. 1-2:

<sup>8</sup> Մնացականյան Յ. Յ., Բրոնզե դարի գենքերի հազվագյուտ նմուշներ Լճաշենում.- «Առվետական գրականություն» ամսագիր, թիվ 9, Երևան, 1965, էջ 129:

Դաշույնը խորհրդանշել է այն կրողի արժանապատվությունը, ընդգծել ուժը: Դրան մեջ տեղ է հատկացվել, օգտագործվել է նաև որպես զարդ, շքեղության առարկա:

Ուշ բրոնզեդարյան դաշույնների մեջ իր զարդարման արվեստով աչքի են ընկնում Լճաշենի № 2 մեջ դամբարանաբլուրի դաշույնները:

Սրանցից առաջինը ունի բավականին հետաքրքիր զարդանախշեր՝ պատկերագրական հետաքրքիր ինաստ պարունակող քանդակներով: Դաշույնի դաստակը ունի սեպաձև կտրվածքներով զարդաշաքեր, դաստակի գլխիկը կլոր է, ուռուցիկ և խաչաձև կտրվածքներով: Խաչի թևերի եռանկյունաձև հատվածները ընդելուզվել են գունավոր փայտով<sup>9</sup>:

Գեղարվեստական կատարելությամբ աչքի է ընկնում դաշույնի պատյանը, որի վրա արված են ոռմբաձև մանր կտրվածքներ, սեպաձև և ռելիեֆ օձապատկեր զարդանախշեր: Պատյանի վրա պատկերված են երեք օձեր, որոնցից մեկը ռելիեֆ, ուղիղ գծով անցնում է կենտրոնական մասով՝ ներքեւ բարձրանալով վեր և ճյուղավորվում երկու մասի: Օձի գալարում մյուս պատկերը սկսում է պատյանի ծայրից և երկճյուղվում այն տեղում, որտեղից երկճյուղվել է առաջին օձապատկերը<sup>10</sup>: Պատյանի մյուս երեսը ծածկված է կտրվածքազարդերով: Օձապատկերը տարածված զարդանախշ է հնագույն Յայաստանի արվեստում: Յելլեմիստական Յայաստանում տարածված են եղել օձագլուխ ապարանջանները, որոնք կրել են ունենոր կանայք<sup>11</sup>:

Նույն դամբարանից երկու համանման դաշույններ են գտնվել, որոնցից մեկի պատյանի վրա երկճյուղ օձապատկեր է, մյուսի վրա՝ մեկ օձապատկեր:

Ցուրօրինակ զարդարման արվեստ ունի եռանկյունաձև, նուրբ ակոսագծերով զարդարված դաշույնի պատյանը<sup>12</sup>: Այն փոսիկազարդով է, մանր գնդագլուխ մեխերով, եռանկյունաձև կտրվածքներով, գունավոր փայտերի ընդելուզվածքով<sup>13</sup>:

<sup>9</sup> **Միացանյան Ա. Օ.** Լշաշենսкие курганы, (Раскопки 1956г.). Краткие Сообщения о докладах и полевых исследованиях института Археологии (КСИА), Москва, 1961, вып. 85, рис. 25, 1-3; **Ավետյան Վ. Վ.**, Սևանի ավազանի մշակույթը..., էջ 133, աղ. XL, նկ. 1:

<sup>10</sup> **Ավետյան Վ. Վ.**, նշվ. աշխ.:

<sup>11</sup> **Նահապետյան Ռ.**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 56:

<sup>12</sup> **Ավետյան Վ. Վ.**, Սևանի ավազանի մշակույթը..., էջ 134:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 134:



Ակ. 1

**Սևանի ավազանից հայտնաբերված ուշ բրոնզեդարյան նախշազարդ դաշույնների օրինակներ**

Իր կատարողական արվեստով հետաքրքրություն է ներկայացնում Երվ. Լալյանի Նոր Բայազետից հայտնաբերած դաշույնը: Սրա պատյանի զարդանախշն իմաստավորում է երկգլխանի վիշապ-օձի, որը ձգտում է դեպի իրեն կլանել Արև-Լուսին գույգ սկավառակները<sup>14</sup>: Պատյանի ստորին մասը առյուծապատկեր քանդակ է, որը հիմնականում հանդես է գալիս արևի հետ<sup>15</sup>: Զարդանախշը արված է սեպածն զարդի տեսքով, եռանկյուններով:

Նմանատիպ, սակայն որոշ աննշան զարդանախշային տարբերությամբ դաշույնի պատյան դարձյալ հանդիպում ենք Նոր Բայազետում<sup>16</sup>: Սրա վրա պատկերված է երկգլխանի վիշապ-օձ, որի կողքերը պատված են սեպածն զարդերով:

<sup>14</sup> Մարտիրոսյան Յ. Ա., Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 34, նկ. 35:

<sup>15</sup> Մարտիրոսյան Յ. Ա., նույն տեղում: Խարայելյան Յ. Ռ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Դայաստանում, Երևան, 1973, էջ 62, նկ. 33:

<sup>16</sup> Եսայան Ս. Ա. Խնդօժեաւունության արդարական գիտությունների (ԼՀԳ), Երևան, 1988, № 11, էջ 80-81, աղ. III, նկ. 2:


Հետաքրքիր է, որ այն մասում, որտեղ օձը ճյուղավորվում է երկու մասի, բաց տարածքում սեպերով պատկերված է կիսատ վարդյակ, որի միջոցով պատրաստող վարպետը կարծես ձգտել է արտահայտել որևէ իմաստ: Յավանաբար այն արտահայտում է Վերածնունդի, բազմաճյուղ կենաց ծարի գաղափարը: Ուղիղ սրա վերևում երկու վարդյակներ են՝ արևի տեսքով, ավելի վեր, մի փոքր այլ պատկերագրման՝ պատկերված է երրորդ վարդյակը: Պատյանի ծայրին նստած առյուծի փոքրիկ քանդակ է, հստակորեն երևում են նստած դիրքը, աչքերը, փոքր-ինչ բաց երախը:

Կատարողական առումով հետաքրքրություն են ներկայացնում Ծովազարդ (Մոլխան) գյուղում 1970 թվականին տան հիմնափորման աշխատանքների ժամանակ բացված քարարկոյա դամբարանից գտնված երկու դաշույնների մնացորդները<sup>17</sup>:

**Ա դաշույն.** Սրանից պահպանվել է միայն դաստակի բրոնզե գլխիկը՝ ամբողջական: Զնաբանորեն այն ննան է «սարկավագի գլխարկի», գագաթին կլոր, վերադիր բներ է, որից դեպի հիմք իջնում են չորս ելուստներ: Սրանց վրա երկարությամբ արված են խազագծեր, իսկ ելուստների միջև գծազարդերով արված են վերադիր ռոմբաձև բներներ (նկ. 2ա):

Գլխիկի տրամագիծը 3,5 սմ է, ելուստների հետ միասին հաստությունը՝ 4,5 սմ, բարձրությունը՝ 3,5 սմ: Դաստակի գլխիկի մեջ պահպանված են եղել փայտի մնացորդներ, որոնց վրա շեղբը բռնակին ամրացվել է բրոնզե գամերով: Այդ ննապատակով շեղբին արվել են անցքեր և գամեր՝ փայտե բռնակին: Վերջինիս ամբողջովին զարդարել է բրոնզե գլխիկը, որն ամրացվել է բռնակին գամերի միջոցով: Գամերի թիվը 10 է: Ենթադրաբար դաշույնի շեղբի երկարությունը բռնակի հետ եղել է 30-35 սմ, առանց բռնակի՝ 20-22 սմ: Յավանաբար դաշույնն ունեցել է զարդարուն պատյան՝ փայտե կամ կաշվե վրաքաշով:

**Բ դաշույն.** Նախորդի ննան սրանից ևս պահպանվել է միայն դաստակի բրոնզե գլխիկը՝ ամբողջական վիճակում (նկ. 2բ): Այն փոքր-ինչ երկարավուն է, վերնամասը կլոր, որի վրա հավանաբար Ա դաշույնի գլխիկի բների ննան արվել է բներանախշ:



նկ. 2

**Ծովազարդից (Մոլխան) հայտնաբերված բրոնզե դաշույնների  
դաստակի գլխիկների զարդարուն հատվածների վերակազմությունը**

<sup>17</sup> Ավետյան Վ. Վ., Գործնական աշխատանքներ հնագիտությունից, Երևան, 1983, էջ 71-73, նկ. 6-7:

Դաստակի գլխիկի վերին մասից դեպի նրա հիմք են իջնում թվով 8 ելուստներ, որոնք ընդհատվում են գլխիկի ուղիղ միջին գոտում: Դրանից ցած՝ 0,5 սմ հնտերվալից հետո, ընդայնակի երեք խազագծերով արված է դուրս ընկած գոտի: Խազով գոտեպատված է նաև գլխիկի ներքին վերջավորությունը, իսկ երկու գոտիների միջև ընդլայնակի, մի շարքով արված են անցքեր՝ գլխիկը փայտե բռնակին գամելով ամրացնելու համար: Գլխիկի տրամագիծն է 3,5 սմ, ելուստների հետ հասությունը՝ 4 սմ, երկարությունը՝ 4,5 սմ: Շեղը բռնակին ամրացվել է պղնձե կամ բրոնզե գամերով: Գլխիկը բռնակին ամրացվել է գամերով, որոնց համար դրա վրա արված են 4 կլոր անցքեր: Բռնակն ունեցել է վերադիր և խորադիր երկրաչափական տարածե զարդանախշեր: Նմանատիպ դաշույնները կարող են համարվել բրոնզեդարյան գինարվեստի լավագույն նմուշներ: Դրանք տարածված են Սևանի ավազանում և մասնագիտական գրականության մեջ հայտնի են սևանյան տիպի դաշույններ անվաճք<sup>18</sup>:

Ի դեմս սևանյան, հատկապես լճաշենյան դաշույնների՝ ակնհայտ է, որ այս հնագույն բնակավայրի վարպետները կարողացել են հմտորեն և դասական ձևով օգտագործել դեկորատիվ կիրառական արվեստի բնագավառում ավազանի մշակույթում սիրված սեպածե կտրվածքներով զարդանախշերը: Նկատելի է, որ ամեն մի առարկայի և դրանց տեղադրման համար՝ իր տեսակում գտնվել է համապատասխան չափ, ձև և ոիթբ: Ընդ որում, դաշույնների նախշազարդման մեջ, մեկ ոճի և մոտիվի միասնության մեջ չենք նկատում հորինվածքային կոկոնություններ<sup>19</sup>:

Կարծում ենք, որ, զարդարվեստի ուսումնասիրման բնագավառում, կարևոր վում է հնագույն գենքերի, հատկապես դաշույնների զարդանախշային հորինվածքի և պատկերագրության ձևաբանական վերլուծությունը, համոզված լինելով, որ Սևանի ավազանի բրոնզեդարյան մետաղագործ վարպետը ոչ միայն եղել է հմուտ գինագործ, այլև արվեստագետ: Դա է փաստում այն, որ դաշույնների նախշերը նրբակերտորեն զուգորդված են դրանց ձևի հետ, և գինարվեստի այս տեսակում գոյություն ունեցող բարձր էսթետիկական որակը օբյեկտիվորեն թույլ է տալիս այդ արհեստը դիտել կիրառական արվեստի գեղարվեստական կողմից:

## ОРНАМЕНТЫ БРОНЗОВЫХ КИНЖАЛОВ СЕВАНСКОГО БАССЕЙНА

*М. С. КЕШИШЯН*

Исследуемый материал об орнаментальных бронзовых кинжалах бассейна оз. Севан является незначительной частью предметов вооружения материальной культуры древней Армении, в основном Лачашена эпохи поздней бронзы. На футлярах этих кинжалов имеются великолепные клиновидные орнаменты, которые являются прекрасными творениями древних мастеров и дают нам возможность иметь определенные

<sup>18</sup> Куфтин Б. А. Археологические раскопки в Триалети, с. 58.

<sup>19</sup> Блеэк В. Б. Памятники декоративно-прикладного искусства из Лачашена. *Պատմաբանական հանդես* (ԹԲՀ), Երևան, 1968, № 3 (42), էջ 254-255:

представления о замечательных мастерах-бронзовитейщиках Севанского бассейна, создавших великолепные творения прикладного искусства, орнаментальные мотивы которых значительно обогащают наши представления о древних верованиях.

#### **ORNAMENTS ON BRONZE DAGGERS IN SEVAN BASIN**

***M. S. KESHISHYAN***

The article is about the ornaments of the Sevan Basin Bronze daggers. It is mentioned that those daggers not only present historical, archaeological value, but also testify to the ancient times ingot masters of high art.